ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

07.02.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 51-Ա

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 13.12.2022թ.թիվ ՍԴ3/0247/02/22 վճիռով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գորիսի համայնքապետարանի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023թ. փետրվարի 3-ի նիստի արձանագրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Յու. Բախշյան փողոցի թիվ 3 հասցեի բնակչուհի Սվետլանա Չապաևի Միրաքյանին /ծնված 10.12.1962թ./ սահմանել խնամակալ իր որդու՝ դատարանի վճռով անգործունակ ճանաչված Սամվել Մարատի Միրաքյանի /ծնված 06.09.1982թ./ նկատմամբ:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/07/02
Ք.Գորիս